

ԺԱՄԱԿԱՐԳՈՒԹԵԱՆ ՄԵԿՆՈՒԹԻՒՆ

ՀԵԴԱՐՁԱԿ

ՍՏԵՓԱՆՆՈՍԻ ԻՄԱՍՏԱՍԻՐԻ ՍԻՒՆԵԱՑ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ.

«Ստեփաննոս Սիւնեաց.. Արար զխօսս մեկնօրէն ի վերայ ժամերգութեանց». Ղազար կթ. Զահկեցի. Դրախտ Յանկալի եր. 625: Ժամերգութեանց ընդարձակ Մեկնութիւնս գտնւում է այս Զեռագրերի մէջ.

Ա. օրինակ. Էջմիածնի ձեռագիր. Համար 1454 Մեկնութիւն եկեղեցական ժամերգութեան. թղ 1ա:

Բ. օրինակ. Էջմիածնի ձեռագիր. Ժբ-րդ դարու. Համար 1695 Պատմութիւն Եղիշեի. թղ 130^ա. ունի այս Խորագիրը, «Յառաջաբանութիւն պատմութեանց, եթէ ո՞րպէս կարգեալ է աղաւրից մերոց հայցուածք. զոր ասացեալ է Տեառն Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի»: Արտագրողի յաւելուած համարելով, «Զոր ասացեալ է Տեառն Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի» խօսքերը, թողինք միայն իւր հին Խորագիրը, այն է, «Յառաջաբանութիւն պատմութեանց» և այլն:

Գ. օրինակ. Էջմիածնի ձեռագիր. Համար 912 ճառընիր անցման երկաթագիր. թղ 372^ա:

Սիւնեցու այս Ընդպարձակ Ժամակարգութեան Մեկնութիւնը բաղկացած է հինգ ժամերի Նախաղրութիւնից, Յառաջաբանից, և 11 Գլուխներից, որոնցից և կազմել է իւր Համառօս Ժամակարգութեան Մեկնութիւնը. կամ գուցէ Համառօտը Ընդպարձակից առաջ է զրել: Թէ Յառաջաբանը և թէ Ա. Բ Գ և Զ Ը գլուխները, թէ իրենց նիւթերի դասաւորութեամբ ու բացատրութեամբ, թէ Սուրբ Գրքից առած նմանօրինակ վկայութիւնների նմանութեամբ, և թէ համանման բառ ու բանի գործածութեամբ բոլորովին նման են Յոհան Իմաստասէր Օձնեցի Հայրապետի՝ «Յառաջագս կարգաց եկեղեցւոյ» գրուածքին, ինչպէս կտեսնէ ընթերցողը իրենց տեղերում. այնպէս որ, Երկիս մէջ յիշեալ Յառաջաբանն ըստ յիշեալ Գլուխները կարդալով մէկը, անշուշտ պիտի ցանկանայ իմանալ, թէ արդեօք է և Ը-րդ դարերում ծաղկած այս Երկու նշանաւոր և եկեղեցու ախոյեան սուրբ հայրերից ո՞րն է առաջ զրել իւր Երկը, Օձնեցին է առաջ զրել

իւր երկը, որին և հետեւել է Սիւնեցին, թէ Սիւնեցին է առաջ գրել, որին և հետեւել է Օձնեցին Այս, այսչափ նման են իրար՝ ժամակարգութեան Մեկնութեան այս երկու հոգեցունչ երկերս, որոնք սկսած Դ. բդ դարից մինչև Հ.-բդ դար ընծայում են մեզ կարգաւ Հայոց եկեղեցւոյ ժամակարգութեան ստոյգ պատկերը, Օձնեցին՝ կրկնութեամբ, մի բան երկու տեղ, երեք տեղ, չորս տեղ գրելով, իսկ Սիւնեցին՝ միաշար, ամփոփ, առանց կրկնութեան:

Սիւնեցու այս երկի մէջ բոլորովին ինքնուրոյն գրուածք է Դ. գլուխը, որը նուրիբել է հոգեկրօն եպիսկոպոսս Առւրբ Աստուածին և Սուրբ Աստուածը այժմեան ձեռվ յառաջ բերելով, յարձակում է այն հաւատուրաց չարափառների դէմ, որոնք ժխտում են Փրկչի համար ասել միայն «խաչեցար», «Արդ՝ այս է ըստ սրբոյն յաջողակ խոստովանուի», Առաւաւտին ասելով խաչեցար և Երէկունն. այս է ճշմարիտ խոստովանուին հաւատոյ, [4] ոչ որպէս անիծեալն ստամիտ Լեռնին, կամ ածուրաց և մարդադաւան ժողովս Քաղկեդոնի, որ փոխանակ խաչեցար ասելոյ՝ ըստ առաքելական և մարդարէական քարոզութեանն (տես Դատաստանագիրք Էջմիածնի Սինօդի. յօդուած ԽթժԱ. երես 216), ասացին ուր ուրեք, Սուրբ Աստուած ու մարմնով խաչեցար:

Սիւնեցին այսպէս էլ գրում է և իւր Համառօտի Դ. գլուխի մէջ, «Արդ՝ այս է յաջողակ սրբոցն Առաւաւտուն ասել Սուրբ Աստուած որ խաչեցար և Երեկուն, որ է ճշմարիտ խոստովանութիւն հաւատոյ. ոչ որպէս անիծեալն նեստոր և աստուածառուրաց Քաղկեդոնի ժողովս. որ փոխանակ խաչեցար ասելոյն ըստ առաքելական և մարդարէական քարոզութեանն, ասացին, Սուրբ Աստուած որ մարմնով խաչեցար:

Ինքնուրոյն գրուածք է նոյնպէս է գլուխը, ուր բացատրում է սուրբ Պատարագի և քահանայական զգեստների խորհրդաւոր նշանակութիւնները:

Ինքնուրոյն գրուածք է և Ժ. գլուխը, ուր կանոնաւոր, կարգաւ յառաջ է բերում Երեկոյեան ժամերգութեան պաշտամունքները, մինչդեռ Յոհան Իմաստասիրի Երկի մէջ նոքա են աքանց ցաքան և կրկնուած չորս տեղ. տես երես 95, 110—114, 22 և 29, Կանոն իԳ.

Այսպէս էլ բոլորովին ինքնուրոյն Դգրուածք է ԺԱ. գլուխը, որով ընծայում է մեզ Հանգստեան կամ Խաղաղական ժամի պատկերը, ժամիս պաշտամունքներից յիշատակելով ի կագրալ իմում սաղմոսը և Շնորհեա մեզ Տէր յայտնի երգը, որով և լոիկ Թնջիկ աւարտում է իւր այս գրուածքը, ոչ յայտնապէս յիշատակելով ժամիս մէջ արձանացած միւս կենդանաբար Աղօթքները, Քարոզները և Փոխերը: Յոհան Իմաստասիր հայրապետը ժամիս պաշտամունք-

Ներից խուլ կերպով Յ տեղ յիշատակում է միայն Ի կարդալ իմում սաղմուը, «Արդ չորք են ընդ ամ երեկոյին աղօթից սաղմոսք առանց Հանգսեան սպամոսին»: Կանոն ԺԹ «Արժան է . . զհետ բերել յերեկորինսն զիանգսեանն սաղմոս»: Կանոն ԻԳ «Նոյն պէս և զերեկորինսն . . վախճան ամ պաշտամանն՝ զիանգրստեանն սաղմոսն ասել, ըստ դասուց վերածայնութ»: Յոհ. Խմ. 22, 28, 29: Եւ ըստ Օձնեցու երեխ թէ Հանգստեան ժամը երեկոյին ժամի հետ կից է եղել, մինչդեռ Սիւնեցու երկի մէջ դրուած է իբրև առանձին Աղօթից ժամ:

Ինչպէս երեւում է Է-ըդ գլխից, Սիւնեցին իւր այս Երկը գրել է մի Մեկենասի խնդրանքով, որին դառնալով այս խօսքերն է ասում, երբ կամենում է գրել անմահ Պատարագի և քահանայական զգեստների մասին, «Ակսցուք կատարելութ Բարձրելոյն և գրոց առաջնորդութ լուծանել զիսնդեղիս բանիդ»: Յոհան Իմաստասէրն ևս սոյն տեղում խուլ կերպով յիշատակում է և իւր Մեկենասին, «Աստանօր վստահանալով ի շնորհս Հոգւոյն սրբոյ, աղօթիւք ձերով բուռն հարցուք զբանէն գիտութեան, սուր և սուրբ տեսլեամբ. և լինիցի այս մրապէս, եթէ ոչ աղօթիւք ձերով տացին բան ի միտս մեր»: Յոհ. Խմ. 104: Թէ մի են այս Հոգեսէր և ազգեցիկ Մեկենասները, որոնք իրենց բուռն աղերսանքներով դրդել են երկու Մեծ Իմաստասէրներիս թողնել ժամակարգութեան, այսինքն աստուածապաշտութեան, անդրանիկ յիշատակներ, գրելով նրանցից մինն ի Սիւնիս և միւսն ի Դուռին կամ յօձուն, այս առթիւ դժուարին է մեզ մի որոշ բան ասել:

Բառս Նախսերգան և Նախսերգական, Սիւնեցին յիշատակում է թէ իւր այս Ընդարձակ ժամ. Մեկնութեան Ա. Նախսերգութեան մէջ, «Առաջին նառն յաղագս նախսերգան աղաւրիցն», թէ Ա. գլխի Նախսագրութեան մէջ, «Զի՞նչ աւրինակ իմաստուք. . . զմիւս նախսերգական հնգիւք սաղմոսին», թէ Դ գլխի մէջ, «Հնգիւք սաղմոսիւք ի նախսերգականին, զիինք զգայարանս նեանակէ», և թէ Համառոտի Խորագրի մէջ, «Վասն նախսերգանի աղաւրից», և Դ գլխի վերջում, «Նախսերգանին. Ե. սաղմոսն զիինք զգայարանս նեանակէ»:

Նախսերգան կամ Նախսերգական սաղմոսն է «Տէր զի բազումը», որին Յոհան Իմաստասէր և Խոսրով Անձևացին կոչում են Առաջարանից Սալմոս, «Նախսառաջարանիցն ասել զչորեսին սաղմոսն (Տէր զի բազում: Տէր ամ փրկութեան: Օրինեա անձն իմ զտէր: Տէր լուր աղօթից: Ըստ Սիւնեցու նաև Տէր երկ զերպուն իմ): Յով. Խմաս. 1833, Վասկ, կանոն ԽԱ: «Նոյնպէս և ոչ զսաղմոս առաջարանիցն ի կանոն յարէին, այլ Քըովք մեկնէին (ընթերցուածով էին բաժանում)». Խոսրով Անձևացի. Մեկ. Ժամ. 1447 թղ 15^ա: Իսկ յունարէն բառս Անգիրոն, որ նշանակում է ձեռքի խաչ,

Սիւնեցին յիշատակում է թէ իւր այս Ընդարձակ և թէ իւր Համառոտ ժամակարգութեան Մեկնութեան է զլիսի Նախադրութեան մէջ՝ այս յարենման խօսքերով, «Եւ անփիռն որ ի ձեռին»։

Սիւնեցու այս պատուական և մեր գրականութեանն անծանօթ երկը ունի՝ և Հ-րդ դարերի գրիչներին յատուկ հետևեալ բարդ բառերը, որոնք չունի 1837 թուին Վենետիկում տպուած նշանաւոր Հայկագեան Բառարանը։

Ընդարձակամտութիւն. տես Նախադրութիւն. (ունի Հ Բ. միայն մի օրինակ)։

Գործութիւն. տես Յառաջարան.

Նախերգական. տես Ա և Դ գլուխ.

Գերապայծառագոյն. Բ »

Առաջնուտըւչութիւն Բ »

Հաւեղ—երկար. Բ գլուխ. Ունի Հ Բ Հաւեղ Եռավանկ բառ,

որի առաջին չ վանկերը երկար են։

Վերաբարձումն Բ »

Ուժընդակ Գ »

Վերհամբարձեալ Դ »

Նախադգեստ Ե »

Խորհրդարերում Զ »

Խաչազգեստիկ Ե »

Համբարձութիւն Ե »

Վիմադրել Բ »

Շարադանութիւն ԺԱ. »

Խորխորել ԺԱ. »

Աղամածնեալ ԺԱ. »

Արդարահանգոյց ԺԱ. »

Հրաժեշտել ԺԱ. »

Վայելչաբարբառ ԺԱ. »

ԺԱՄԱԿԱՐԳՈՒԹԵԱՆ ՄԵԿՆՈՒԹԻՒՆ

ՀԱՄԱՆՈՅՑ

ՍՏԵՓԱՆՆՈՍԻ ԻՄԱՍՏԱՍԻՐԻ ՍԻՒՆԵԱԾ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ.

«Վարք ծննդեան և մննդեան Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի... Մեկնեաց եւ զխորհուրդ Գիշերային պատշամանն». Էջմիածնի ձեռագիր. Համար 949 ձառքնիր. թղ 745. «Երգեաց եւ

կցուրդս . . . մեկնեաց եւ զխորհուրդ գիշերային պատամանն». Պատ.
Ստեփ. Օքբիլեան. Լ.Ա. գլուխու

Համառօտ Մեկնութիւնս գտնւում է այս Զեռագրերի մէջ.

Ա. օրինակ. Էջմիածնի ձեռագիր. Համար 912 ձառքնուր անց-
ման երկաթագիր. թղ 372^ա. ունի այս Խորագիրը, «Սրբոյն Ստե-
փանոսուի Սիւնեաց եպիսկոպոսի Վասն նախերգանի աղաւրից, որ
ի Մէջգիշերի կատարի», Արտագրողի յաւելուած համարելով «Սըր-
բոյն Ստեփանոսուի Սիւնեաց եպիսկոպոսի» խօսքերը, թողինք
միայն իւր հին Խորագիրը, այն է, «Վասն նախերգանի աղաւրից»
և այլն:

Բ. օրինակ. Էջմիածնի ձեռագիր. Համար 2050 Տօնապատճառ.
թղ 226^թ:

Իսկ Մեկնութեանս Նախադրութիւնը գտնւում է Համար 18
Աղօրագիր Բենիկ վարդապետի. թղ 68^թ, և ունի այս Խորագիրը,
«Ճետան Ստեփանոսուի Սիւնեաց եպիսկոպոսի Պատճառ Աղօրիցն»:
Արտագրողի յաւելուած համարելով, «Տեսոն Ստեփանոսուի Սիւ-
նեաց եպիսկոպոսի» խօսքերը, թողինք միայն իւր հին Խորագիրը,
այն է, «Պատճառ աղաւրիցն»: որը համապատասխանում է Սիւնե-
ցու իւր գրած Եկեղեցւոյ Հիմնարկութեան Խորագրին, «Պատճառ
նիմնարկութեան սրբոյ եկեղեցւոյ»: Էջմիածնի ձեռագիր. Համար
773 Մատոց, ԺԳ. բդ դարու. թղ 15^ա:

Բառս Պատճառ, Սիւնեցին գործ է ածում Յաղագս և Վասն
բառերի իմաստով, որպէս և այս տեսնուում է և ուրիշ հեղինակ-
ների կողմից. «Ի հատուածի պատճառս». Թովմայ Վարդապետ Արծ-
րունի. Դ. 12: «Յանարդելութեանս պատճառ», Նարեկ. Լ.Զ. և այլն:

Նախադրութիւնս բաղկացած է հինգ փոքր հատուածներից,
և միաբան է Ընդարձակի հինգ ժամերի արձակ հատուածներից
կազմուած Նախադրութեան հետ, թէ Աղօթից ժամերի գլխակար-
գութեան դասաւորութեամբ, թէ նրանց բովանդակութեամբ, և
թէ նրանց մէջ գործադրած համանման բառ ու բանի նմանու-
թեամբ, զորօրինակ.

Հնդարձակ.

Համառօտ.

Առաջին ճառն . . . և եթէ ամբացեալ
հնգիւք սաղմոսիւքն զհինգ զգայա-
րանս . . . , և դարձեալ թէ, որպէս եւթն
գորդայիւքն կանոնս եղեալ յաղաւթս,
զեւթն աւուրց ի շաբաթու . . զաւուրսն
նշանակէ. և զեւթն աւուրց եւթնհա-
զարեան դարեան խորհուրդն : . . եւ
բաթուց, և է դարունէ

ա. Տէր եթէ զշրթունսն.
ե. փոխիւ, զգայարա-
նացս է թիւն, ամբաստա-
նութիւն ի վերայ սատա-
նայի: Կանոնի. է. գոր-
դայքն, է աւուրց շա-
բաթուց, և է դարունէ

եթէ Օրբելյան երից Մանկանցն | Հարց], նշանակէ ի ձեռն յարութեանն Քըհստոսի. իսկ Մեծացուսցէն և Ռդորմեացն, զաղատութիւն կնոջն ոլորելոյ. և եթէ, Տէր յերկնիցն . զհանդերձելոց զկեանն, որ ընդ հրեշտակս լինելոցն է նշանակէ:

Երկրորդ ճառ . . թէ, որպէս ընդ Արևագալն կատարի աղաւթքն, զյարութիւն մեռելոց ցուցանէ. վասն զի ի նոյն ժամու առաւաւտուցն ստեղծեալ եղկ մարդն առաջին յանարատ ձեռացն Ա. և եթէ, Նա է ճշմարիտ կեանք Ք. որ ծագելոց է աշխարհի ի միւսանգամ զալըստեան իւրոյ . . :

Երրորդ ճառն. եթէ, յերրորդ ժամու եղկ մարդն առաջին Աղամ . . , ի նմին ժամու Երրորդի կենարարն մեր Ք. ի խաչին տարածեալ զբազուկս առ ի բժշկել զայն ձեռն, որ յերրորդ ժամու ի ծառն ընթացեալ, առ զպտուղն մահացու. Եւ եթէ, յերրորդ ժամու եկեալ Հոգին ս. ի վերնատունն յառաքեալսն ս. ի: Եւ եթէ, յերրորդ ժամու գալուստ Միածնին լինելոց է . . :

Հարցն, Աղամայ յարութեանն. և Մեծացուսցէն և Ռդորմեայն, Եւայեանց ազատութիւնն. Տէր յերկնիցն, ի յարութեան առուրն հրեշտականալն ընդ հրեշտական:

Բ. Արևագալն, վասն յարութեան ի նոյն ժամն, և ստեղծման մարդոյն, և ծագման աստուածեան լուսոյն երրակի:

Գ. Մարդն Աղամ յերրորդ ժամու պատրի ի ծառն, և Տէրն ի սոյն ժամու խաչիւ դատապարտի: Եւ Սուրբ Հոգին ի սոյն [ժամու] մխիթարիչ. և Գալուստն երկրորդ ի սոյն: Ընդարձակ, զլուխ Զ. «Է» ը արդեաւք յերրորդ ժամու գայ ի խաչ ելանել. թուի եթէ, ի նոյն ժամու գերեալ լինէր նախաստեղծն ի բանսարկուէն մոլեկան ընթացիւք ի ծառն մահարեր»:

Չորրորդ ճառն, յաղագս Հասարակաւրեայն կոչեալ ժամու. եթէ, զՄէջաւուրբն յանցանս կային նախաստեղծքն խաւարազգած մտաւք . . : Յաղագս որոյ ի նմին ժամու Բանն ա. երկրորդ Աղամն . . պրկեալ ի խաչին . . զմել ի մահուանէ փրկեաց . . :

Եւ եթէ, Հինգերորդ ճառն, որ վասն Համազստեան աղաւթիցն կարգեալ է. և

դ. Հասարակ աւուրն. տրտում տխուր խաւարազգաց մտաւք նախահայրն. վասն որոյ Տէրն առեալ զնոյն յինքն ի վերայ խաչին:

Ե. Ե. Երրորդ արեգական մտանելոյն և ծագմանն:

եթէ, ակն ունելով այսմ լուսոյ արեգականս, որ ծագէ և ի տեղի իւր ձգի. և եթէ, սպասել արթուն մտաւք մեծի աւուրն յետնումն ծագելոյ արեգականն արդարութեան. և եթէ, ի բոխն ունի զելիցն մերոց յաշխարհէ, և զծագումն լուսոյ յարութեան մերոյ նշանակէ. և եթէ, եւթն անգամ յաւուրն աւրհնել զԱստուած . . . :

Տեառն ծագմանն միշտ մնալոյ, զմուտ և զել մեր գուշակելով. և ընդ է անգամն աղօթելն սովալ է. զի առաքելական է սահմանս այս, քան ամենայն՝ որ է բաժանի. Որպէս Աղամ և եւայ զմահու պատուզն ի սիրտս իջուցին ճաշակմամբն, նոյնալէս Բ և ածն մեր ի սիրտս առաքելոցն. և այժմ և մինչ ի կատարած զկենացն զեղն յամենայնի ի սիրտս իջուցանէ, զիւրն տալով զանմանութիւն և զկեանս:

Համառօտ Մեկութեանս Ա. Գլուխը համառօտուած է Ընդարձակի Ա. Նախագրութիւնից և Ա. Գլխից: Բ Գլուխը, Ընդարձակի Բ Նախագրութիւնից և Բ Գլխից: Գ Գլուխը, Ընդարձակի Գ Գլուխից: Դ Գլուխը, Ընդարձակի Դ Գլխից: Զ Գլուխը, Ընդարձակի Զ Գլխից: Է Գլուխը, Ընդարձակի Է Գլխի Նախագրութիւնից և Է Գլխից: Եւ այսպէս ինքն Սիւնեցին իւր կամքի և բաղձանաց համաձայն համառօտելով իւր Ընդարձակից ժամակարգութեանս Մեկնութիւնը, և ամփոփելով եօթն Գլուխների մէջ, աւարտ է տալիս իւր այս գրութեան, այլ ևս չխօսելով «Հասարակաւուեալն» ժամի կամ «Հասարակ աւուր» ժամի (Ճաշու ժամ), իններորդ ժամի, Երեկոյեան ժամի և Հանգստեան ժամի մասին, երեի թէ այս ժամերը իրենց պաշտամունքներով հանդերձ իւր Ընդարձակի մէջ լիուլի բացարած լինելու պատճառով:

Հիմնարկութիւն եկեղեցւոյ եւ օծումն եկեղեցւոյ
Ստեփաննոսի իմաստասիրի Սիւնեաց եպիսկոպոսի:

Գտնւում է հետեւեալ Զեռագրների մէջ.

Ա. օրինակ. էջմիածնի ձեռագիր. Համար 973 Մարտոց, ԺԿ-րդ դարու, թղ 15^ա, ունի այս Խորագիրը, «Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի Պատեառ Հիմնարկութեան սրբոյ Եկեղեցւոյ»: Արտա-

գրողի յաւելուած համարելով «Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի» խօսքերը, թողինք միայն իւր հին Խորագիրը, այն է, «Պատճառ Հիմնարկութեան սրբոյ Եկեղեցոյ», որն՝ ինչպէս ասացինք, համապատասխանում է Սիւնեցու գրած Համառօտ Ժամամակարգութեան մեկնութեան Նախադրութեան Խորագրին, — «Պատճառ Աղօրիցն», ուր և յայտնել ենք Պատճառ բառի նշանակութիւնը:

Բ օրինակ. էջմիածնի ձեռագիր. Համար 912 ձառընիր անցման երկաթագիր. թղ 419^ա. ունի այս Խորագիրը, «Յաղագ Հիմնարկութեան Եկեղեցւոյ Մեծին Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի»: «Մեծին Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի» խօսքերը ի հարկէ պէտք է համարել արտագրողի յաւելուած: Եկեղեցւոյ Հիմնարկութեան և Օծման Կանոնը Ե-րդ դարում գրել է Յոհան Մանդակունի Հայրապետը Դուխնում. «Զնիմնարկութիւն Եկեղեցւոյ եւ զժամանար... Յոհաննու Մանդակունեցոյ է արարեալ, որ երեքտասաներորդ էր յետ սրբոյն Գրիգորի հայրապետ»: Էջմիածնի ձեռագիր. Համար 591 Ժողովածու. ընտիր հին բոլորագիր, անթուական, առանց յիշատակարանի, թղ 351: «Զ Հիմնարկին եւ զեկեղեցւոյ Սրինէք Մանդակունին է արարեալ, որ չորեքտասան թիւ էր ի սրբոյն Գրիգորէ մինչև ցՍա»: Մայր Մատոց «տպագրեցեալ ի Տիրահրաւէք Հայրապետութիւն... Տեառն Դասիէլի. 1807. ի Քիւրքճի խանին, որ ի Պօլիս, ի ձեռն Գալուստ դպրի»:

Ստեփաննոս Խմաստասէրի յիշեալ «Պատճառ Հիմնարկութեան սրբոյ Եկեղեցւոյ» երկի համաձայն, և Յոհան Խմաստասէր Հայրապետի «Հիմնարկին Եկեղեցւոյ» և «Օրհնութիւն Նորաւեն Եկեղեցւոյ» երկերի համաձայն, մեր Եկեղեցու Հիմնարկութեան և Օծման արարողութիւնները Ե-րդ և յաջորդ դարերում մինչև 1807 թուականը կատարուել են այսպէս:

Ժողովուրդը միարան միաձայն Եկեղեցու տեղը որոշելուց յետոյ, ապա գրաւոր կամ բանաւոր դիմում է թեմի առաջնորդ Եպիսկոպոսին գալ Եկեղեցու հիմքը քցել:

Եւ ըստ Օձնեցու Քահանայապետը՝ այսինքն առաջնորդը, ժողովում է Եկեղեցու կղերներին և պաշտօնեաներին այն տեղի վերայ, ուր պիտի շինուի Եկեղեցի, սայլերով տանելով իրենց հետ՝ Փրկչի երկոտասան աշակերտների թուով 12 հատ մեծամեծ անտառ եւ անկոփ քարերի մէջ դնելու համար. «Քարինս Երկոտասան անտառ» (Օձնեցի). Ավեմ անտառ եւ անկոփ եղեալ ի հիմունա» (Սիւնեցի): Իսկ ի տեղի կենսատու Փրկչի՝ բեմի մէջտեղում հաստատելու համար, տանում էին մի մեծագոյն երկայն մէմ իւր Սեղանով, ովեմ կանգնեալ ի մէջ խորանին ի տեղւոց սեղանոյն, օրինակ և հոգեւոր վիմին» (Սիւնեցի), որոնք և նուիրուած

գետնի վերայ թափելուց յետոյ, ապա սկսում էին բացօթեայ կատարել Եկեղեցու Հիմնարկութեան՝ Մանդակունու գրած այս կարգը՝ ըստ Օձնեցու:

Սաղմոս Խէ. Մեծ է Տէր եւ օրհնեալ է յոյժ (13 տուն).

» ԶԴ. Ո՞րպէս սիրելիք են յարկի բո,

(15 տուն, չունի Մաշտոց).

» ԶԴ. Հաճեցար Տէր ընդ երկիր բո. (12 տուն).

» ԶՀ. Հիմունք նորա ի լեռն ս՝ բորա (6 տուն).

Սաղմոսներս աւարտելուց յետոյ, ասում է Սարկաւագը, «Ենդեսուի հաւատով յաջողել զգործս ձեռաց մերոց ի հանոյս խրոց կամաց», որից յետոյ ասում է Եպիսկոպոսը երեք անգամ խրոխտալիք, «Տէր ողօրմեա». Ապա յօրինակ Փրկչի Բեմի կետրունում—«Ի մեջ բեմին» հաստատում կանգնեցնում են «Վեմ մի . . յօրինակ նոգեւոր վիմին»: Իսկ երկոտասան քարերը լուանում են նախ ջրով, ապա գինուով, և յօրինակ Առաքելոց և ի նշանակ նոցա քարոզութեան աշխարհի չորս կողմերում, գնում Եկեղեցու չորս անկիւններում, «Իսկ գնելն զբարինոն ի չորս անկիւնս Եկեղեցւոյն՝ նշանակէ զնոցին ընթացս ի չորս անկիւնս աշխարհի (Օձնեցի), «Իսկ լուացեալ եւ աւծեալ եւ եղեալ ի չորս անկիւնս» (Սիւնեցի), հանդիսապէս ընթանալով քարերի առաջից լապտերներով և անուշանուտ խունկեր ծխելով. որից յետոյ կարդում է Եպիսկոպոսը Դանիէլ մարգարէի հետևեալ սրտառուչ Աղօթքը, որի ընթերցող Եպիսկոպոսի համար, ասում է Օձնեցին, «Վբոլոր ուխտին առեալ զաղօթս նուիրէ առաջի Աստուծոյ», այսպէս էլ զրուած է Աղօթքս, «Եւ արդ՝ լուր տէր Ա՝ մեր աղօթից ծառայից քոց և խնդրուածաց»: Աղօթքիս սկիզբն է, «Տէր Ասուած մեծոց եւ սեանշելի»:

Աղօթքս աւարտելուց յետոյ, ապա հրամայում է Եպիսկոպոսը արհեստաւորներին առնել Եկեղեցու հիմքերը բրելու գործիքները, «Իրամայէ առնուլ զգարծի բրելոյն»: Իսկ ինքը Եպիսկոպոսը, որպէս տեսլեան մէջ աշխարհի Արարչապետից տաճարի ձևակերպութիւնն ընդունող մի Եղեկիէլ, կամ որպէս սուրբ Հոփիսիւմանց կուսանաց վկայարանները հիմնարկող մի վեհազն Լուսաւորիչ Եկեղեցու տարածութեան տեղը շուրջանակի Գաւազանի ծայրով գծելէն յետոյ, «Ճրագրէ զտելին», ապա Երրորդութեան անունով օծում է մեռոնով քարերը, «օծանելն զբարինոն ա՝ ծայնօվն մեռնաւ՝ վերակոչմամբ խորհրդական նրբորդութեանն», որից յետոյ հանդիսականները ասում են Յ անգամ Ամեն, «Եւ երիցս ամեն ասիլն», ապա կարդում են բարձր ձայնով այս մի տուն սաղմոսը, «Զգործս ձեռաց մերոց ուլիդ առա ի մեզ Տէր, եւ զգործս ձեռաց մերոց յաջողեա մեզ», որից յետոյ կարդում են հետևեալ 12 խորհրդաւոր ընթերցուածները, «Իսկ ընթեւցուածքն շարամանեալ

խորհրդովք համաձայնին նախակարգութեանց» (Օձնեցի).

Հնթերցուածս յերրորդ Թագ. Եւ տռամեաց ֆրան.

Հնթերցուածս յԱռակաց, Ած իմաստութ հիմուն էարկ երկրի.

Հնթերցուածս ի Յորայ, Մրկիր՝ ի նմանէ ելցէ հաց.

Հնթերցուածս յԵս. մարգ. Այսպէս առէ ՏՔ, տինեսցին տունս.

Հնթերցուածս յԵս. մարգ. Այսպէս առէ ՏՔ, երկինք արող իմ.

Հնթերցուածս յԵզեկ. մարգ. Եւ ահա այր մի, Եւ տեսիլ նորա եր.

Հնթերցուածս ի Զաք. մարգ. Ամբարձի զաշս իմ Եւ տեսի.

Հնթերցուածս ի Զաք. մարգ. Եւ դարձաւ երեսուին.

Հնթերցուածս յԱնգ. մարգ. Եւ արդ զօրացիր դու զօրսբաբէլ.

Պող. Առ. ի Կոր. Առ. Թղ. է ընթ. Ելլբարք զի ԱՇ զործակից եմք.

Ալէլուիա, ալէլուիա ՏԵՐ լալս իմ Եւ կեանք իմ.

Աւետարան ըստ Մատ. Եւ Ելեալ Ցիսուս ի կողմանս.

Ապա ասում է Սարկաւագը, Վանն ի վերուս խաղաղութեան.

Որից յետոյ Եպիսկոպոսը կարգում է այս Աղօթքը, ՏԵՐ ԱՇ մեր, որ ի վերայ առաքելական Վիմի:

Ապա ասում է Սարկաւագը, Խնդրեսցով հաւատով.

Խոկ Եպիսկոպոսը, Օրինութիւն Եւ փառք Հօր Եւ Որդոյ Եւ Հոգւոյն սրբոյ.

Մրանից յետոյ Եպիսկոպոսը անմիջապէս Բրիչն առնելով (փայտառ. զազմա) ի նշանակ Վկայութեան Խորանի, ի նշանակ Սողոմոնի տաճարի, և ի նշանակ Զօրաբարէլի ձեռքով նրա նորոգման, զարկում է գետնին—Եկեղեցու չորս կողմերում, իւրաքանչիւր կողմում 3 անգամ, որ անում է 12, ի նշանակ 12 Առաքելոց և 12 Քարերի. ապա Բրիչը տալիս է արհեստաւորներին հիմքերը փորելու, «Եւ նոյնինեայն առնու զբրիցն Եպիսկոպոսն Եւ նախ ինքն հարկանէ զնուիրեալն Երկիր. Եւ ապա այլ ցարուեսաւորսն». Որից յետոյ դասէ դաս կանգնելով Սեղանի տեղում, «ի տելուջ սեղանոյն», իրք հոգմոր ըղձերի աւարտման տեղում, ասում Են բարձրաձայն, «Հիմունի նորս ի լեռուն սուրբ նորա, սիրէ ՏԵՐ զգբունս Սիրնի քան զամ յարկան Յակոբայ». Եւ Օձնեցին մեծ երկիրածութեամբ, բարեպաշտութեամբ և իրաւամբ Եկեղեցու հիմունքներ է համարում «Թրանիսն Աստուծոյ, Տապանն Նոյեան Եւ Խորանն Աբրահամու» ասելով որոտաձայն «Այսոքիկ հիմունիք ի սուրբ լեառն Սիրով», որից յետոյ աւարտուում է Հիմնարկութեան կարգը հետեալ ընթերցուածներով.

Քարոզ Վասն ի վերուս խաղաղութեան.

Հնթերց. յԵս. մարգ, Լուսաւորեաց լուսաւորեաց Երուսաղէմ.

Պետ. Առ. ի Կաթ. Առ. Թղ. է ընթ. Սիրելիք առ որ մատուցեալ.

Ալէլուիա, ալէլուիա ՏԵՐ սիրեցի զայելչութիւն տան քա.

Աւետարան ըստ Մատ. Ամենայն որ լսէ զբանս իմ զայսոսիկ.

Ահա այս է մեր Եկեղեցու Հիմնարկութեան հին կարգը, որը 1807 թուին կոստանդնուպօլսում բոլորովին կերպարանափոխուեց էջմիածնի նոռեիրակ Մինաս Արքեպիսկոպոսի և Գալուստ Դավիթի ձեռքով: Քարերը փոխանակ հսկայ, մեծամեծ լինելու, և միայն յանուն Առաքելոց 12 հատ լինելու, գրկելու չափ մանրացան և նրանց թիւը եղաւ 16, որոնք փոխանակ Եկեղեցու անկիւններում դնելու, գրւում են Եկեղեցու չորս կողմերում և Սեղանի անկիւնների տակ: Եկեղեցի շինելու համար համայնքից նուիրուած գետինը փոխանակ անարատ մնալու, մինչև որ Եպիսկոպոսի և Եկեղեցու ուխտի ձեռքով կկատարուի նրա վրայ Հիմնարկութեան և Քարերի օծման կարգը, մինչև որ ինքը Եպիսկոպոսը իւր Գաւազանի ծայրով նշան կանէ—կգծէ Եկեղեցու տեղը, մինչև որ Եպիսկոպոսը Բրիչն առնելով՝ ի թիւ երկոտասան Առաքելոց կպարկէ նրա չորս կողմերը 12 անգամ, և ապա ինքը թոյլ կտայ արհեստաւորներին հիմքերը փորել, ըստ յիշեալ Մայր Մաշտոցի, Եկեղեցու հիմքերը արդէն փորուած են լինում:

Եիշեալ Մայր Մաշտոցը, Եկեղեցու Հիմնարկութեան Խորագիրը ունի այսպէս, «Կանոն Եւ արարակութիւն վասն հիմնարկութեան Եկեղեցոյ: Արաւեալ Տեառն Յոհաննու Մանդակունոյ Սրբազան կարուղիկասի նախապահ: Եւ կարգաւորեալ այժմ ի Սրբոյ Սրուոյն Էջմիածնի միաբան Տեառն Մինասայ Արհի Եպիսկոպոսէ»: Եթէ չլինէին մէջտեղում Օձնեցու և Սիւնեցու համանման երկերը, որոնք իրեն աւանդ անկապտելի ընծայում են մեզ Եկեղեցու Հիմնարկութեան կարգը այսպէս, որպէս նրա արքազան Հեղինակն է գրել, յիշեալ Մաշտոցով շատ դժուարին կլինէր որոշել, թէ որն է Մանդակու գրածը, և որն է Արհի Մինասի «կարգաւորածք»: Մանդակունու գրածից բաւականին տարբեր՝ Արհի Մինասից «բարեկարգեցեալ» է նաև և Եկեղեցու Օձման կարգը:

Սեփաննոս Իմաստասիրի Երկերը.

1. «Մեկնեաց և գրեանս բազումս զԱրարածն, զՅոբն, զԵղեկիկն և այլ բազումս». Պատ. Ստ. Օրբէլեան, ԼԱ գլուխ:
2. «զՅարութեան Օրհնութիւնն»: (բացի ֆէ ձայնից), Անդ.
3. «Բանք ընդդիմութեան ի նիւթս հաւատոյ» 22 գլխովք, էջմիածնի Մատենադարանում: Պատ. Հայ. Դպ. 477 եր.
4. Մեկնութիւն Աւետարանաց. «Կիրակոս ալ կը զրուցէ թէ սուրբ Աւետարանաց մեկնութիւն մը յօրինած ըլլայ», Անդ. 477 եր.
5. «Աշխարհացոյց Ստեփաննոսի Հայոց իմաստասիրի ի գրոց մեկնութենէ». Անդ. 477.

6. «Ստեփաննոսի Սիւնեաց տեառն Պատասխանիք ընդդէմ աղգին Ֆուանկաց»։ Անդ. 478։
 7. Դիոնեսիոս Արիսպագացի (թարգմանութիւն) Անդ. 478։
 8. Պարապմանց դիրք սրբոյն Կիւրղի (թարգ.) Անդ. 478։
 9. Յաղագս բնութեան մարդոյ, Գրիգորի Նիւսացւոյ. Անդ. 478։
 10. Մեկնութիւն Ղևտական գրոց. Անդ. 478.
 11. «Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի մեծի իմաստաւիրի պատասխանի թղթոյն Անտիոքու եպիսկոպոսի, զոր վասն հաւատոյ գրեալ էր»։ Անդ. 476.
 12. Թուղթ առ վարդապետու Աղուանից. Անդ. 475։
 13. Թուղթ Գերմանոսի Կոստանդնուպօլսոյ Հայրապետի, Անդ. 474։
 14. «Վասն անապականութեան մարմնոյն, որք ասեն թէ, որ աճէ և նուազէ»։ Հրատ. Գալուստ Տ. Մկրտչիան 1902. Ս. Էջմիածին։
 15. «Յառաջաբանութիւն պատմութեանց, եթէ որպէս կարգեալ է աղաւթից մերոց հայցուածք»—Մեկնութիւն Ժամակարգութեան, Ընդարձակ.
 16. «Վասն նախերգանի աղաւթից, որ ի Մէջ գիշերի կատարի»—Մեկնութիւն Ժամակարգութեան, Համառօտ։
 17. «Պատճառ Հիմնարկութեան սրբոյ Եկեղեցւոյ»։ Քառանկիւնի փակագծի մէջ [] առնուած խօսքերը և բառերը մեր աւելացրածն են։

Սահմանադրության պահպանի մասին

ՅԱՌԱՋԱԲԱՆՈՒԹԻՒՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆՑ, ԵԹԷ ՈՐՊէՄ

ԿՈՐԴԵԱԼ Է ԱՂԱԽԹԻՑ ՄԵՐՈՑ ՀԱՅՑՈՒՍԾՔ.

[Ն Ա.Խ Ա.Գ Ր Ո Ւ Թ Ի Ւ Ն]

Առ 1^ա Առ 150^ա Առաջին ճառն յաղագս նախերգան
5 աղաւթիցն, որ ի Գիշերին կատարի. թէ, Որպէս նե-
ղեալ ոք ի չար թշնամեաց եկեալ մաղթէ առաջի արդար
դատաւորութեանն Ա՞յ, առնել ընդարձակամտութիւն ի
կանխեալ աղաւթսն. և եթէ, ամրացեալ հնգիւք սաղմո-
սիւքն զհինդ զգայարանս, զի և յաղաւթսն յաջորդեալ
10 ծանաւթս կացուացէ. և դարձեալ թէ, որպէս եւթն Գոբ-
դայիւքն կանոնս եղեալ յաղաւթս, զեւթն աւուրց ի շա-
բաթու ամենազար արարչութեանն Ա՞յ զաւուրսն նշա-
նակէ, և զեւթն աւուրս եւթն հազարեան 1^ր դարեան խոր-
հուրդ: Եւ Աւրհնութիւնքն՝ ի վերայ եկեալ, մարգարէիցն,

5 Տես Համառօտ Ա. գլուխ, «Որպէս նեղեալ ոք ի չար թըշ-
նամեաց, և եկեալ մաղթէ առաջի արդար դատաւորին Ա՞յ» ևայլն.

5 Բ ըզնեղեալ. Գ նեղեալ.

11 Բ զեւթն աւուրցդ ի շաբաթուդ.

12 Ա.Բ յաւուրսն.

14 Մարգարէից Օրհնութիւնք և կանոնագլուխք ըստ Սաղ-
մոսի կանոնների:

Երանեալի կանոնագլուխ ոչ. Սիրեցից: Օրհնութիւն, «Օրհ-
նութիւն Մովսէսի եւ որդւոցն իսրայէլի. Ելից. ԺԵ 1. Օրհնեսցուք
զտէր զի փառօք:

Երկինք պատմենի կանոնագլուխ ոչ. Դատեա տէր: Օրհնու-
թիւն, «Օրհնութիւն մեծին Մովսէսի ածատես մարգարէին. Բ Օրէնք.
ԼԲ 1. Նայեցարուք երկինք:

Մի նախանձիրի կանոնագլուխ ոչ. Ասաց անզգամն Օրհնու-
թիւն, «Օրհնութիւն մեծին Մովսէսի ածատես մարգարէի Բ Օրէնք.
ԼԲ 22. Զի հուր բորբոքեցաւ:

զութերը եակ աւըն նշանակէ: Եւ եթէ, Աւրհնութիւն երից Մանկանցն, նշանակէ ի ձեռն յարութեանն Ք*ի. իսկ Մեծացուացէն և Ողորմեացն, զազատութիւն կնոջն զլորելոյ. և եթէ, Տէր յերկնիցն՝ որ ըստ նման է աս-
տեաւքս, զհանդերձելոց զկեանսն՝ որ ընդ հրեշտակս լինելոցն է՝ աւրինակէ:

Երկրորդ ճառ բան, թէ, որպէս ընդ Արևագալն կա-
տարի աղաւթքն, զյարութիւն մեռելոց ցուցանէ. վասն
զի ի նոյն ժամու առաւաւտուցն ստեղծեալ եղի մարդն
10 առաջին յանարատ ձեռացն Ա*յ, և եթէ, նա է ճշմարիտ
կեանք Ք*ս, որ ծագելոց է աշխարհի ի միւսանգամ զա-
լուտեան իւրոյ, և տայ զկենդանութիւն արժանացելոցն:

Երրորդ ճառն. եթէ, յերբորդ ժամու եղի մարդն
առաջին Աղամ. վասն որոյ ի նմին ժամու երբորդի կե-
15 նարարն մեր Ք*ս ի խաչին տարածեալ զբազուկս առ ի
բժշկել զայն ձեռն, որ յերրորդ ժամու ի ծառն ընթա-
ցեալ, առ զպտուղն մահացու: Եւ եթէ, յերբորդ ժամու

Ողորմեաի Կանոնագլուխ բ. ի քեզ տէր յուսացայ: Օրհնութիւն, «Աղօրք Ա. Ենայի մօրն Սամուելի Ա. Թագ. Բ. 1. Հաստատեցաւ:

Կրեկի Կանոնագլուխ բ. Զողորմութիւնս քո: Օրհնութիւն,
«Օրհնութիւն Եսայեայ որդւոյն Ամովսայ. Եսա. ԻՇ. 9. ի գիշերաց
կանխէ հոգի իմ:

Տէր ապաւէնի Կանոնագլուխ բ. Խոստովան: Օրհնութիւն,
«Աղօրք Եղեկիայի արքայի հրեաստանի, ի ժամանակի յորում նիւան-
դացաւ, եւ յարեաւ ի նիւանդութենէ իւրմէ. Եսա. ԼՇ. 10. Ես ասացի
ի վերանալ յինէն:

Խոստովանի Կանոնագլուխ բ. Արարի: Օրհնութիւն, «Օրհ-
նութիւն Եսայեայ կայծակնամակուր ս՝ մարգարեին. Եսա. ԽԲ. 10.
Օրհնեցէք զԱստուած:

Ի նեղութեանի Կանոնագլուխ բ. Օրհնեա անձն իմ զտէր:
Օրհնութիւն, «Աղօրք Ա. Մբակումայ մարգարեին. Ամբակ. Գ. 1. Տէր
զլուր քո լուայ.

1 Բ դարն նշանակէ.

4 Բ զլորեցելոյ.

5 Ա. Բ հրեշտակս. Համառօտը՝ ընդ հրեշտակսն.

7 Բ ճառ է բան. «է» նոր աւելացրած.

16 Բ զայն ձեռս.

եկեալ Հոգին սուրբ ի վերնատունն յառաքեալմն սուրբ:
Եւ եթէ, յերրորդ ժամու գալուստ Միածնին լինելոց է
փառաւք ա՞ծութեանն, որ նշանակ է այս հանդերձելոյ
եկեղեցւոյ Ք.ի.

5 **Չորրորդ** ճառն յազագս Հասարակաւրեայն կոչեալ
ժամու, եթէ, 2^ա զՄէջաւուրբն յանցանս կային նախաս-
տեղծքն խաւարազգած մտաւք. և եթէ, կային ի տարա-
կուսի և մղձկէին ոգիք նոցա: Յազագս որոյ ի նմին
ժամու Բանն ա՞ծ երկրորդ Աղամն գալով ի խաչն. իսկ
10 ի վիրելոյ տանջանացն, կայը պղկեալ ի խաչին. և մահ-
ուամբն և յարութեամբն իւրով զմեզ ի մահուանէ փըր-
կեաց, և տանջանաւքն¹⁵¹ իւրովք ի տանջանաց ազա-
տեաց զմարդիկ, ի խաւարային իշխանութենէ ապրեցու-
ցանել, առաւել ևս նեղել զարհուրանաւք ընդ մուտս
15 արկուն. զինչ արդեաւք լինելոց է ամենենին խաւար առ-
նելոյ: Իսկ եթէ այսոցիկ կարգեալ է, զոր արար ա՞ծոր-
դին՝ իշխանելով ի հող, զմարդիկ պատուեաց ի կեանս. և
եթէ, զնոյն ինքն զԳիշերոյն աղաւթիցն զխորհուրդն ու-
նին յինքեանս:

20 **Եւ եթէ,** Հինգերորդ ճառն, որ վասն Հանգստեան
աղաւթիցն կարգեալ է. և եթէ, ակն ունելով այսմ լուսոյ
արեգականս, որ ծագէ և ի աեղի իւր ձգի. և եթէ, սպա-
սել արթուն մտաւք մեծի աւուրն յետնումն ծագելոյ
արեգականն արդարութեանն. և եթէ, ի բոխն ունի զելիցն
25 մերոց յաշխարհէ, և զծագումն յուսոյ յարութեան մերոյ
նշանակէ. և եթէ, եւթն անգամ յ[աւուրն աւ]րհնել զԱ՞ծ.
այս ցուցանին միտք և խորհրդածուք ճառելոցս: Պի-
տառու²թիւն ժամուցն, զոր կարգեցին ս՞ր առաքեալքն,
յետ կատարման չարչարանացն Ք.ի. այս է մեկնութիւն:

5 Բ կոչելով: Ա. կոչել.

6 Ա. նախաստեղծն.

9 Ա. աղամ.

10 Բ վիրաւորելոյ.

15 Բ չունի՝ ամենենին.

[Յ Ա. Ռ Ա. Զ Ա. Բ Ա. Ն]

Աւային և զկենդանարար և զսբ Հոգւոյն՝ որ առ
արարածս լինէր գործութիւնք, յայտնելով որ երբեմն
իսկակիցն է Հոգւոյն, «Հողմ՝ ուր կամի, ասէ, շնչէ»,
5 այսինքն է, որ յամենայսն նշանակէ իւր զխորհրդոց ¹⁵¹⁸
զմատակարարութիւնն, նա [մանաւանդ] ոչ միայն յար-
ժանաւորսն մարդիկ, այլ և յոչսն. այսպէս նոյնպէս և
յանբանսն և յանշունչսն. քանզի սուրբն էապէս բնակէ
տաճարացուցանելով յինքեան, որով խաւսի իսկ նոքաւք
10 զխորոցն Այ: Իսկ յոչն պիտանիսն և յանարժանսն
բնակութեան, յաղագս բազում սիրոյն իւրոյ առ արա-
րածս ներեա. զազդեալն լոկ սակս զմարդկան տնաւ-
րինեալ փրկութիւն: Աստանաւը զբաղաամայ իմա, որ
զյայտնեալն այ Բանին բարբառէր ի վախճան ժամանա-
15 կիս յերկրի. [ն]աև զէշն նորուն, կամ զանշունչ գաւա-
զանն պտղաբերեալ, ապա չեն զարմանք, եթէ մեղաւու-
րաց և անարժանից թողացուցանէ փոքր ինչ. յայտնել
յեկեղեցւոջ մասն մի ի հնդից անտի ի բանիցն սրբոյն
Պաւղոսի յաւգուտ ուսումնասիրացն ասել,
20 Արդ՝ շրջե[ա]լ ընդ հին և ընդ նոր պատուիրանս Այ:
քննու^թբ, և քաղե[ա]լ ի հոգենոր աղբերացն զծաղիկս բա-
նին³ առ նիւթ պատրաստութեան իմոյ շարադրութեանս,
և յաւրինեցի զսա կտակարանս ի միտս ի ժամ աղաւ-
թիցն կարգեալ որ ի Գիշերի և ի Տըւընջեան կատարի
25 յեկեղեցւոյն Քի:

(Շարունակելի)

2 Տես Յոհանն Իմաստ. 1833. Վնտկ. 81. «Զաստուածային
և զկենդանարար Հոգւոյն սրբոյ զօրութիւնն յայտնելով» և այլն:
3 Յովհ. Գ 8.

9 Բ ինքեան.

17 Ա. Բ յայտնեալ.

21 Բ քաղեալ.

23 Բ սա.